ԼԻԱՆԱ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1996 թվականի հունվարի 31-ին Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում:

2013-2017թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2017-2019թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2018 թվականին ավարտել է ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման դասընթացը:

25.09.2017-12.03.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

24.01.2019-01.07.2022թթ. աշխատել է նախ՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում՝ որպես քննիչ, ապա՝ ավագ քննիչ:

11.10.2022-27.06.2023թթ. աշխատել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում՝ որպես ավագ քննիչ:

28.06.2023 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով քննիչ:

Ամուսնացած չէ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1986 թվականի հուլիսի 21-ին, Երևան քաղաքում:

1992 թվականին ընդունվել է Երևան քաղաքի թիվ 34 միջնակարգ դպրոցը, այնուհետև ուսումը շարունակել է Երևանի «Գիտակ» քոլեջում և 2002 թվականին ավարտել:

2004-2008թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2008-2010թթ. ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

19.06.2006-01.09.2006թթ. աշխատել է ՀՀ տնտեսական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

09.06.2008-09.11.2012թթ. ծառայել է ՀՀ ՊՆ Արմավիրի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի օպերատիվ բաժանմունքում՝ որպես սպա, ապա նշանակվել է ծառայության ՀՀ ՊՆ Երևանի կայազորի ռազմական ոստիկանության հետաքննչական բաժանմունքում՝ որպես ավագ հետաքննիչ:

20.11.2012-21.03.2013թթ. աշխատել է Վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

21.03.2013-21.05.2014թթ. աշխատել է Վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես նախագահի խորհրդական:

21.05.2014-05.10.2015թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես մասնագետ:

05.10.2015-06.12.2017թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչության դատական պրակտիկայի ամփոփման բաժնում՝ որպես մասնագետ:

06.12.2017-27.03.2018թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչության դատական պրակտիկայի ամփոփման բաժնում՝ որպես ավագ մասնագետ:

27.03.2018-07.01.2023թթ. աշխատել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:

07.01.2023 թվականից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում՝ որպես դատավոր:

Ամուսնացած է, ունի մեկ երեխա: